



Australian Government



COVID-19-ի դեմ ձեր պատվաստումից հետո. Pfizer

Պատվաստանյութի մասին

Այսօր դուք ստացել եք **Comirnaty (Pfizer Australia Pty Ltd)** պատվաստանյութը:

Այս պատվաստանյութը կարող է կանխել COVID-19-ով հիվանդանալը: Comirnaty-ն չի պարունակում որևէ կենդանի վիրուս և այն չի կարող ձեզ վարակել COVID-19-ով: Այն պարունակում է ժառանգական կոդ SARS-COV-2 վիրուսի կարևոր մասի համար, որը կոչվում է հասկ սպիտակուց: Պատվաստանյութը ստանալուց հետո՝ ձեր մարմինը ստեղծում է հասկ սպիտակուցի պատճեններ: Ձեր իմունային համակարգը այնուհետև կսովորի ճանաչել և պայքարել SARS-COV-2 վիրուսի դեմ: Ժառանգական կոդը օրգանիզմի կողմից արագ տրոհվում է:

Ինչ ակնկալել պատվաստումից հետո

Ինչպես ցանկացած պատվաստանյութի դեպքում՝ դուք կարող եք ունենալ որոշ կողմնակի բարդություններ COVID-19 պատվաստանյութը ստանալուց հետո:

Comirnaty-ից հետո **ընդհանուր** կողմնակի ազդեցությունները ներառում են.

- ցավ կամ այտուց ներարկման վայրում
- հոգնածություն
- գլխացավ
- մկանային ցավ
- ջերմություն և դող
- հոդացավ:

Comirnaty-ից հետո **առավել քիչ տարածված** կողմնակի ազդեցությունները ներառում են.

- կարմրություն ներարկման վայրում
- սրտխառնոց
- ընդլայնված ավշային հանգույցներ
- վատ զգացողություն
- ցավ վերջույթներում
- անքնություն
- քոր ներարկման վայրում:

Այս կողմնակի ազդեցությունները սովորաբար մեղմ են և սովորաբար վերանում են մեկ կամ երկու օրվա ընթացքում: Որոշ պատվաստում ստացողներ այս պատվաստումից գրիպի նման ավելի զգալի ախտանիշներ կունենան՝ համեմատած այլ սովորական պատվաստումների հետ և հնարավոր է իրենց բնականոն գործողությունները որոշ ժամանակ չկատարեն: Այս ախտանիշները կարող են առաջանալ առաջին կամ երկրորդ դեղաչափից հետո, բայց ավելի տարածված են երկրորդ դեղաչափից հետո:

Եթե դուք զգում եք ցավ ներարկման վայրում կամ ունեք ջերմություն, գլխացավ կամ մարմնի ցավեր պատվաստումից հետո, կարող եք ընդունել պարացետամոլ կամ իբուպրոֆեն: Մրանք օգնում են նվազեցնել վերը նշված ախտանիշների մի մասը (դուք կարիք չունեք պարացետամոլ կամ իբուպրոֆեն ընդունել նախքան պատվաստումը): Եթե ներարկման վայրում այտուցվածություն կա, կարող եք օգտագործել սառը թրջոց:

Հազվադեպ կողմնակի ազդեցությունները, որոնք գրանցվել են **Comirnaty-ից** հետո, հետևյալն են.

- Ծանր ալերգիկ ռեակցիա (անաֆիլաքսիա)

Դուք պետք է դիմեք բժշկական օգնության պատվաստումից հետո, եթե՝

- դուք կարծում եք, որ դուք ունեք ալերգիկ ռեակցիա: Ջանգահարեք 000, եթե դուք զգում եք ծանր ախտանիշներ, ինչպիսիք են՝ դժվար շնչառություն, խոխոց, սրտի արագ բաբախում կամ գիտակցության կորուստ:
- դուք մտահոգված եք հնարավոր կողմնակի ազդեցության համար կամ ունեք նոր կամ անսպասելի ախտանիշներ:
- դուք ունեք պատվաստանյութի սպասվող կողմնակի ազդեցություն, որը չի վերացել մի քանի օրից:

Ախտանիշների համար, որոնք հրատապ չեն, դուք կարող եք դիմել ձեր հիմնական առողջապահական ծառայություն տրամադրողին (սովորաբար ձեր բուժող բժշկին):

Պատվաստանյութի անվտանգության վերահսկում և կողմնակի ազդեցությունների տեղեկացում

Կասկածվող կողմնակի ազդեցությունների մասին կարող եք տեղեկացնել ձեր պատվաստանյութ մատակարարողին կամ այլ առողջապահական մասնագետին: Նրանք հետո կներկայացնեն պաշտոնական զեկույց ձեր անունից ձեր նահանգային կամ տարածքային առողջապահության նախարարությանը կամ ուղղակիորեն Թերապևտիկ ապրանքների վարչությանը (TGA):

Եթե նախընտրում եք տեղեկացնել այն ինքներդ, այցելեք [COVID-19 պատվաստանյութի հետ կապված կասկածվող կողմնակի բարդությունների տեղեկացման կայքէջ](#), որոնք ներկայացված են TGA կայքէջում և հետևեք էջի ցուցումներին:

COVID-19 թեստավորում պատվաստումից հետո

COVID-19-ի դեմ պատվաստման որոշ կողմնակի ազդեցություններ կարող են նման լինել COVID-19-ի ախտանիշներին (օրինակ՝ ջերմություն): Մակայն Comirnaty-ն չի պարունակում որևէ կենդանի վիրուս և չի կարող առաջացնել COVID-19: Պարտադիր չէ անցնել COVID-19 թեստավորում կամ մեկուսանալ:

- եթե ձեր մոտ առաջանան ընդհանուր ախտանիշներ, ինչպիսիք են՝ ջերմությունը, գլխացավը կամ հոգնածությունը պատվաստումից հետո առաջին երկու օրվա ընթացքում, և
- եթե համոզված եք, որ չունեք որևէ շնչառական ախտանիշներ (օրինակ՝ քթից հոսում, հագ, կոկորդի ցավ, հոտառության կորուստ կամ համի կորուստ):

Մակայն, դուք պետք է ստուգեք ընթացիկ ուղեցույցները ձեր նահանգում/տարածքում վերջին տեղեկատվության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կարող է փոխվել ձեր տեղական տարածքում COVID-19 բռնկման դեպքում: Հնարավոր է, որ ձեզ դեռ անհրաժեշտ լինի անցնել COVID-19 թեստավորում, եթե դուք համապատասխանում եք այլ չափանիշներին, օրինակ՝ դուք COVID-19-ով վարակված որևէ մեկի հետ սերտ շփման մեջ եք: Եթե կասկածում եք, դիմեք բժշկական զննման:

Հիշեք ձեր երկրորդ ժամադրության մասին

Կարևոր է, որ դուք ստանաք Comirnaty (Pfizer)-ի երկու դեղաչափ, առնվազն երեք շաբաթվա տարբերությամբ: Հավանական է, որ երկրորդ դեղաչափը երկարաձգի COVID-19-ի դեմ պաշտպանությունը:

Ինչպես է օգտագործվում տեղեկատվությունը, որը դուք տրամադրում եք ձեր ժամադրության ժամանակ

Տեղեկատվության համար, թե ինչպես են ձեր անձնական տվյալները հավաքվում, պահվում և օգտագործվում, այցելեք՝ <https://www.health.gov.au/using-our-websites/privacy/privacy-notice-for-covid-19-vaccinations>